# ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ

07.05.2021 14:31

***Հարգելի՛ փաստաբաններ,***

Տեղեկացնում ենք, որ 12.05.2021թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում տեղի է ունենալու ակումբի նիստ, հետևյալ օրակարգային հարցերով**.**

*1. www.azdarar.am հրապարակային ծանուցման կայքի միջոցով իրականացվող դատական ծանուցումների իրավաչափության հարցի քննարկում (զեկուցող՝ փաստաբան Թաթուլ Խուդատյան),*

*2. ՀՀ քրեական օրենսգրքի տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գլխում նախատեսվող փոփոխությունների հարցի քննարկում (զեկուցող՝ փաստաբան Արմինե Ֆանյան):*

Ակումբի նիստին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 12.05.2021թ. ժամը 12:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով ani.gharibyan@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել Ձեր անունն, ազգանունը և արտոնագրի համարը:

Ակումբի նիստի մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })